

ՀԱՍՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
HASMİK PETROSYAN

**ԲՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՐԶ, ՏԵՂՈՒՄՆԵՐ ԱՆՎԱՆՈՂ
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԴԱՐՉԱԾԱՅԻՆ ՍԻԱՎՈՐՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՄԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Դարձվածքի հիմնական իմաստակիր բաղադրիչ կարող են դառնալ բնության երևույթներ նշանակությամբ բառերը, որոնք ունեն հաճախակի գործածություն և պատկանում են բառային հիմնական ֆոնդին: Բնության երևույթները (քամի, փոթորիկ, կայծակ, կարկուտ, անձրև, ծյուն) գրեթե նույն կերպ են ընկալվում տարբեր ժողովուրդների կողմից, սակայն դարձվածքները, որոնք այլաբանորեն և պատկերավոր կերպով ներկայացնում են իմաստային առանձնահատկությունները, վկայում են ժողովուրդների լեզվամտածողության և ազգային յուրահատկությունների մասին:

Փորձենք զուգադրական ուսումնասիրության միջոցով պարզել *քամի, փոթորիկ, կայծակ, կարկուտ, անձրև, ծյուն* բառերը պարունակող դարձվածային միավորների իմաստակառուցվածքային ընդհանրություններն ու տարբերությունները հայերենում, ռուսերենում և անգլերենում:

Համաձայն բացատրական և դարձվածաբանական բառարանների *քամի* բառի ուղիղ և փոխաբերական իմաստները հիմնականում համապատասխանում են դարձվածքներում հանդիպող իմաստներին՝ 1. օդի թեթևակի շարժում, 2. (ժող.) դատարկաբանություն, 3. (ժող.) հողացավ, 4. (փխբ.) ստախոսություն, 5. (փխբ.) ոչնչություն, 6. (փխբ.) քամու նման արագասույր:

Նշված իմաստների հիման վրա կազմված որոշ դարձվածքներ համարժեքներ ունեն դիտարկվող երկու կամ երեք լեզուներում, մյուսները հատուկ են միայն մեկ լեզվի:

Հայերենում հանդիպող *որ քամին բերեց (պտտեց, փչեց)* դարձվածքը նշանակում է «ինչպես պատահեց»՝ զարմացական արտահայտություն մեկի անսպասելի, ցանկալի այցելության վերաբերյալ: Դիտարկվող մյուս լեզուներում համապատասխանում են *какой ветер занес?—what wind blows you here? Քամին որտեղի՞ց է փչում* - «ո՞րն է պատճառը, շարժառիթը» իմաստին համապատասխանում են՝ *откуда еемеп дѳем?—where (how, which way) the wind blows?*

«Անհաստատական, փոփոխամիտ, տարօրինակ, անլուրջ, ոչ իրական բաների մասին մտածող, դատարկ երևակայություն» իմաստին համապատասխանում են՝ *զլխում քամի է, ветер в голове, wind in the head* դարձվածքները: «Փոփոխվել հանգամանքների հետ, անսկզբունքային ձևով փոխելով հանդուժմունքները, աննպատակ կանգնել» իմաստին՝ *քիթը քամուն բռնել- держать нос по ветру*: «Սլանալ, արագ վազել» իմաստին՝ *քամու պես (թռչել)-быстро как ветер, like the wind(to fly, to go, to run)*: «Հոտը զգալ, հոտն առնել» իմաստին համապատասխանում են՝ *քամին առնել-catch (get) wind of* դարձվածքները, իսկ «իզուր՝ անօգուտ՝ ապարդյուն խոսել»՝ *բառերը, խոսքերը քամուն տալ, քամի ծնծել - бросать (кидать, пускать) на ветер (слова), говорить на ветер* դարձվածքները: «Լիովին դատարկ լինել»՝ *զրպանում քամի խաղալ - ветер свистит в карманах*: Նշենք նաև, որ հայերեն *քամուն տալ* բազմիմաստ դարձվածքի յուրաքանչյուր իմաստին համապատասխանում է ռուսերեն կամ անգլերեն մի առանձին դարձվածք՝ ա) ցրիվ տալ, շաղ տալ - *scatter to the winds*, բ) Վատնել, սպառել, իզուր ծախսել (փող, ունեցվածք) — *бросать(кидать, швырять, пускать) на ветер*, գ) մոռացության տալ, մոռանալ՝ *cast (flying, throw) smth. to the winds*, դ) քամու ընթացքին հակառակ պահել - *in the wind's eye, in the teeth of the wind, into the wind*:

Որոշ դարձվածքներ հանդիպում են դիտարկվող մեկ լեզվում՝ *բերանը քամուն բռնել (տալ, դեմ անել, բերանը հովին բռնել, օդին բանալ)* – 1. քաղցած մնալ, սովանալ լինել 2. բրբ. հուսախաբ ըլլալ: Իրանց երեխայի ապրուստն է.թե որ այն էլ ծախեն, բերանները քամուն պետք է բռնեն (Պ.Պ.):

Քամու բերանը զգել - 1. արծակ թողնել, ծածանել 2. փչացնել, վատնել:

Քամու բերած - հեշտությամբ՝ անաշխատ եկամուտով ձեռք բերված, պատահաբար գտած:

Քամի անել - փչել, սուտ խոսել, պարծենալ. Ընչանք իրիկուն, քամի անելով...քեզ պեսների պես ման գաս, խալիսին էլ չհավանես (Պ.Պ.):

Քամի խաղալ - զով՝ հով լինել, մեղմ քամի փչել:

Քամի կուլ տալ/քամի բոցնել - անգործ լինել, պարապ ժամանակ անցկացնել. Չէր կարդում, աշխատանք չէր սիրում և միայն քամի էր կուլ տալիս (Ա.Բ.):

Գլուխը քամի մտնել/գլուխը քամիներով լցնել - անհեթեթ, տարօրինակ մտադրություն, ծրագրեր ունենալ. Նրա գլուխը մի ընենց քամի մտավ, որ ինքն էլ չիմացավ, թե ինչ անի (Պ.Պ.):

Փլխով տաք ու պաղ քամիներ անցնել - կյանքում շատ փորձություններ ունեցած ու դրանցով փորձված լինել:

Այսինչների արանքով սառը քամի անցնել - հարաբերությունները փչանալ, մեջները սառնություն մտնել:

Քուրդը քամուն տալ - 1. սաստիկ ծեծել, խոշտանգել, 2. սպառնալիքի արտահայտություն՝ վնաս պատճառել, 3. խիստ քննադատել, խեղճացնել:

Քմբուկները քամուն տալ (մեկի) խսկց. - 1. հողմացրիվ անել, ջախջախել, ոչնչացնել պատժել, 2. հաղթել. Այդ կերպ պատասխանել ազնվատոհմիկին, որ բավական է մի խոսք ասի. որ՝ քմբուկներդ այնպես քամուն տրվի՝ եկած ճամփադ մոռանաս (Դ.Դ.):

Ուսերեմուն մկատվում է *արագասույր* իմաստի կիրառությունը՝ *ищи ветра в поле* — չես գտնի, ետ չես վերադարձնի, *как ветром сдуло* — ակնթարթորեն անհետանալ: В столовой усталость с него сразу точно ветром сдуло (Б. Полевой, "Повесть о настоящем человеке").

Անգլերենում **քամի** հիմնաբառով կազմված դարձվածային միավորները բազմազան իմաստներով են հանդես գալիս՝ վկայելով այդ լեզուն կրող ժողովրդի ուրույն մտածողության մասին:

To the (four) winds — ամեն կողմ, ամենուր, **free as the wind** — **свободный как ветер** — քամու պես ազատ, **catch the wind in (with) a net** — ցանցով քամի բռնել (անօգուտ գործով զբաղվել, իզուր ջանք թափել), **whistle for a wind** — սպասել հարմար առիթի: But there's no help for it till we know our men. Lay to and whistle for a wind, that's my view (R.L. Stevenson "Treasure Island" ch. XII) - Բայց ոչ մի օգնություն, մինչև չիմանանք մեր մարդկանց: Սպասենք հարմար առիթի, սա է իմ կարծիքը:

Gone with the wind — անհետ կորչել, **so, the wind and reap the whirlwind** — պատասխան տալ ինչ-որ բանի համար, վճարել, **there is something in the wind** (խսկց.) -- ինչ որ բան է լինելու, լուրեր են պտտվում, խոսք է չրջում, **մի քանի քամին առնել** — վտանգը զգալ, նախազգալ:

Փոքրիկ բաղադրիչով դարձվածային միավորներում ուղղակի իմաստները լիովին համընկնում են դիտարկվող երեք լեզուներում: Ինչ վերաբերում է փոխաբերական իմաստներին, որոնք հաճախ հիմք են ծառայում դարձվածքների ձևավորման համար, այստեղ ընդհանրությունների հետ մեկտեղ բացահայտվում են նաև տարբերություններ: Դարձյալ հանդիպում են դարձվածքներ, որ հատուկ են մեկ լեզվի, մյուսները կարող են համարժեքներ ունենալ մյուս լեզուներում:

Փոթորիկը բնորոշվում է որպես շատ ուժգին՝ հաճախ հողմախառն կամ ձյունախառն քամի, որ երբեմն մեծամեծ ավերածություններ է պատճառում: Փոխաբերական իմաստով նշանակում է հասարակական կյանքի խոշոր հուզում՝ խռովություն, մեծ աղետ, չարիք, թշվառություն, ուժգնորեն և մեծ քանակությամբ թափվող բան, տարափ, որևէ բանի բուռն դրսևորում, հոգեկան մեծ հուզմունք՝ տագնապ:

Փոթորիկ մի բաժակ ջրում — *Буря в стакане воды* — **A storm in a teacup (a tempest in a teapot)**՝ ֆրանսերենից պատճենված արտահայտությունը նշանակում է փոքր բանից մեծ աղմուկ, ոչ լուրջ պատճառով առաջացած լուրջ իրարանցում՝ հուզմունք՝ վեճ, դատարկ՝ չնչին՝ անմիտ բանի համար:

Գլխին փոթորիկ պայթել (տրաքել) — *Bring a storm about one's ears* — *Вызвать бурю* — հանկարծակի մեծ անախորժության հանդիպել, մեկի զայրույթն իր վրա ընդունել:

Փոթորիկը հանդարտվել — հուզումները, իրարանցումը վերջ գտնել:

Փոթորիկներ տեսած լինել (կյանքում) — մեծ փորձություններով անցնել:

Черная буря — ուժեղ, դաժան փոթորիկ:

Անգլերենում հանդիպող դարձվածքները ներկայացնում են անցանկալի, ոչ պիտանի մի բան՝ *welcome as a storm*, վտանգավոր իրադրության հիմնական մաս՝ *the eye of the storm*, անհանգստություն, լարում (հասարակական կամ անձնական կյանքում) — *storm and stress*, դժվարությունների հաղթահարում՝ *ride out the storm*, տեղի տալ ճնշմանը՝ *bow before (to) the storm*, հանգստություն փոթորիկից հետո (ասացվածք) *after a storm comes a calm*.

Կայծակ բաղադրիչով դարձվածքները արտահայտում են արագություն, շանթ, վտանգ, փայլ ու որոտ: Փոխաբերական իմաստով արտահայտում են բարկություն, չարություն:

«Սրընթաց, ամենամեծ արագությամբ, շատ արագ» իմաստով դարձվածքներ հանդիպում են հայերենում և անգլերենում՝ **կայծակի արագությամբ** (Կայծակի արագությամբ երեքի գլուխը թոցրեց Անահիտը (Ղ.Ա.)) — *like lightning (with lightning speed, like a streak of lightning), quick as lightning*:

Կայծակ հեռագիր՝ հույժ շտապ հեռագրի տեսակ, հայերենում՝ **կայծակի բաժին դառնալ**՝ (անեծք) կայծակնափայլ լինել, բացականչական արտահայտություն՝ անգլերենում և ռուսերենում՝ *thunder and lightning* — *гром и молния, метать громы и молнии* — բարկացած խոսել:

Անգլերենում *lightning never strikes twice in the same place* ասացվածքը բառացի նշանակում է կայծակը երկու անգամ նույն տեղում չի խփում:

Անակնկալ՝ անսպասելի՝ ցնցող՝ հանկարծակի իրադարձություն են նշանակում հետևյալ դարձվածքները՝ *ինչպես կայծակ արևոտ երկնքից, պարզ (անամպ) երկնքում ճայթած կայծակ (ամպրոպ), ինչպես որոտը պայծառ երկնքից (գրք)* – как (быстро, словно, точно) гром среди ясного неба .

Գլխին (հուր ու) կայծակ թափել – 1. մեկի վրա բարկանալ, 2. դժբախտություն, փորձանք բերել:

Աչքերը կայծակ(ներ) արձակել (թափել) – խիստ զայրանալ, նրա դեմքը գունատվել էր, աչքերը կայծակներ էին արձակում հակառակորդի վրա (Ը.):

Կարկուտ՝ մթնոլորտային տեղում՝ սառցե հատիկների ձևով, օդում սառած անձրևի կաթիլներ: Այս բաղադրիչով դարձվածքներն ավելի շատ հանդիպում են հայերենում, ուսումնասիրվող մյուս լեզուներում դրանք ավելի սակավ են: Փոխաբերական իմաստով կարող է նշանակել որևէ բանի առատություն: *Կարկուտի նման (պես) թափվել (իջնել, տեղալ)* Բարեր ու նետեր կարկտի նման թափում են կռվող թշնամու վրա (Ղ.Ա.):

Կարկուտը տանել – կարկտահարությունից փչանալ, *կարկուտ թափել գլխին* – մեկի վրա խիստ բարկանալ, *կարկտի պես վրա տալ* – արագ-արագ խոսել, *կարկտի տակ ընկած* – (փխբ) կյանքում ձախողված՝ դժբախտացած, կյանքից դառնացած, *կարկուտը ծեծած տեղը կծեծե* (ասացվածք) – միշտ տուժողն է տուժում, *գլխին կարկուտ բերել* – խայտառակել, անպատիվ անել, Ինչ կարկուտ բերիր ծեր գլխիս վրա, հարսը պսակի սեղանից փախչի՞ (Ն.Զ), *կանաչ արտի վրա կարկուտ* – հանկարծահաս մեծ աղետ, *քարե կարկուտ* – մեծ փորձանք, չարիք:

Անգլերենում՝ *thick as hail* – կարկտի պես, շատ խիտ, առատ. By this heavy discharge which continued thick and sharp as hail two or three of the garrison were slain (W.Scott, "Ivenhoe" chapter XXIX. Կարկտի պես շարունակվող հրետակոծումից երկու կամ երեք կայազորներ ոչնչացան), *within hail* – մոտակայքում և *out of hail* – հեռվում, *where do you hail from* – որտեղի՞ց ես (ծագումով): Նշված դարձվածքները վկայում են ժողովուրդների լեզվամտածողության տարբերությունների մասին:

Անձրև մթնոլորտային տեղումը, որ գոյանալով ամպերից թափվում է կաթիլների ձևով, փոխաբերական իմաստով նշանակում է մեծ քանակությամբ տեղացող, թափվող որևէ բան: *Անձրև* բաղադրիչով դարձվածքները՝ ուղիղ և փոխաբերական իմաստներով, ավելի շատ հանդիպում են հայերենում և անգլերենում:

Անձրև գալ (տեղալ) - անձրևել, *անձրև մաղել* - բարակ անձրև գալ, *անձրև ուտել* - անձրևի տակ ընկնել, *անձրևի հույս՝ օգոստոսի շոգին* - անհուսալի, անիրականաճալի բան, *անձրևից փախել՝ ջրուն ընկնել/անձրևից փախելով հեղեղի հանդիպել* - մի բանից խուսափելով ավելի վատ բանի հանդիպել, *որքան անձրևը ծովում լողացողին* - մազաչափ անզամ կարևորություն, օգուտ չունենալ, չմտահոգել, *քրում ես երեսին, ասում է՝ անձրև է գալիս* (գռչկ) - ամոթ՝ պատկառանք չունի, անամոթի մեկն է:

Ոսկի անձրև (գրք) դարձվածքը, որ նշանակում է հարստություն, անսպասելի հարստանալ, ունի ռուսերեն համարժեք - *Золотой дождь* - մեծ փողեր, հարստություն, *գլխին ոսկե անձրև տեղալ* - միանգամից հարստանալ, եկամտաբեր՝ հորդ աղբյուր հոսել, թանկագին նվերներ ստանալ, *дождь угреков* - հանդիմանությունների տարափ:

Անգլերեն դարձվածքներում նկարագրվում է տեղումների ուժգնությունը՝ *it rains(pours) cats and dogs, it is raining pitchforks, the rain comes down (falls) in torrents* - *дождь льет как из ведра* - հորդ անձրև տեղալ: *Come in when it rains / get out of the rain* - նշանակում է անախորժություններից խուսափել, *it never rains, but it pours* - դժբախտությունը մենակ չի գալիս, ծախորդությունները հաջորդում են միմյանց, *rain or shine* - ցանկացած եղանակի, բոլոր դեպքերում, *for a rainy day* - սև օրվա համար, *as right as rain* - առողջ, միանգամայն լավ վիճակում:

Անգլերենի ասացվածքներից ուշագրավ են հետևյալները՝ *after rain comes fair wheather* - (բառացի՝ անձրևից հետո լավ եղանակ է լինում) դժբախտությունից հետո՝ ուրախություն, *the rain falls on the just and unjust* - անձրևը թափվում է բոլորի վրա հավասար, *when it rains it rains on all alike* - երբ անձրևում է, բոլորին հավասար է թրջում, *small rain lays great dust* - փոքր է, բայց թանկ է:

Չյունը մթնոլորտային տեղում է, սպիտակ, աստղաձև փաթիլներով, մաս այդ տեղումների համատարած զանգվածը, որ ձմռանը ծածկում է գետինը, որպես ածական՝ ունի սպիտակ իմաստը: *Գլխին ծյուն գալ (մաղվել, թափվել)/գլխին (սև) ծյուն քերել* - աղետի, թշվառության մեջ ընկնել (զգել), *ինչ ծյուն տամ գլխիս* - բացականչություն աղետի, փորձանքի ժամանակ, *գլխիս (գլխիս, գլխիդ) ծյուն գա* - նախատական արտահայտություն՝ հիմար, անխելք, միամիտ նշանակությամբ, *խելքիդ ծյուն գա* - ասում են, երբ մեկը խելացի չէ, *ծյուն է իջել (նստել) մազերին (գլխին)* - ծեղացել է, մազերը ճերմակել են, *ծնով ընկնել* - ծյանը երկար նայելուց աչքերը շլանալ, տեսողությունը մթագնել:

տկարանալ, *ծյունը տանել* – ձնից սառչել, ձնատար լինել, *ծյան պես՝ նման հալվել* – փչանալ, անհետանալ, վերանալ, արագ սպառվել, *անծյուն ծնեռ* – (փխբ) անճարակ՝ խեղճ մարդ, *ծնեռը ծյուն ուզես, չի տա* (ժող) – ժլատ, *աղբը ծյան տակ չի մնա* – վատ արարքն ի վերջո հայտնի կդառնա՝ կբացահայտվի:

Ռուսերենում՝ *Как (будто, словно, точно) снег на голову* դարձվածքը նշանակում է միանգամայն անսպասելի, հանկարծ, իսկ *(нужен) как проголодавшийся снег* – բոլորովին անպետք, անզեղեցում համարժեք *the snow of yester-year* դարձվածքը նշանակում է անցյալ տարվա ծյուն, անցած անպետք մի բան, *as white as snow* – ծյան պես ճերմակ:

Դիտարկվող դարձվածային միավորների գերակշռող մասը հատուկ են հայերենին, որոշ զուգադրություններ հանդիպում են ռուսերենում և անգլերենում, իսկ բազմաթիվ դարձվածային միավորներ հատուկ են միայն մեկ լեզվի:

Դիտարկվող լեզուներում՝ հայերենում, ռուսերենում, անգլերենում բնության երևույթի անվանում արտահայտող բաղադրիչներով անվանողական դարձվածային միավորները կարող են հանդես գալ տարբեր կառուցվածքային տիպերով՝ երկանդամ, եռանդամ, բազմանդամ կառույցներում:

Բայական կառույցները բնութագրում են մարդկային գործունեության, սովորույթների, հարաբերությունների, վարքագծի, հոգեկան ու ֆիզիկական վիճակի, մտավոր ու բարոյական բնութագրումների բազմազան դրսևորումներ: Մեծ թիվ են կազմում բայական երկանդամ և եռանդամ դարձվածային միավորները, որոնք պարունակում են բնության երևույթների անվանումներ:

Հայերենում հանդիպող երկանդամ բայական դարձվածային միավորների գերադաս անդամը անորոշ դերբայն է: Երկանդամ կառույցները բայական դարձվածքների համակարգում ավելի շատ են և մեծ կիրառություն ունեն: Գուսևան+ամոռոշ դեռբայ կառույցներում գոյականը՝ տվյալ դեպքում բնության երևույթը, դրվում է եզակի (երբեմն հոգնակի) ուռողական-հայցական+անորոշ դեռբայ ձևով՝ *ծյունը տանել, կարկուտը տանել, քամի անել, քամի թռցնել, քամի կուլ տալ, անձրև գալ/տեղալ, անձրև մաղել, անձրև ուտել, փոթորիկը հանդարտվել, քամիներ խաղալ, տրական հուլովով+անորոշ դեռբայ՝ քամուն տալ, օդոծիական հուլովով+անորոշ դեռբայ՝ ծնով ընկնել:*

Բայական եռանդամ դարձվածային միավորներում գերադաս անդամը նորից անորոշ դերբայն է, որը վերջադաս դիրքում է հանդես գալիս, իսկ դարձվածքի հիմք բառի հետ որպես ծավալիչներ կարող են գործածվել տարբեր խոսքի մասեր:

Գոյական+գոյական+անորոշ դերբայ կառուցվածքով դարձվածային միավորներում հանդես են գալիս տարբեր հոլովներով դրված երկու գոյականներ և անորոշ դերբայ: Բնության երևույթ բաղադրիչով հանդիպում են գոյական (սեռական հոլով)+գոյական(ուղղական-հալածական)+անորոշ դերբայ՝ քամու բերանը գցել, կայծակի բաժին դառնալ: Գոյական (ուղղական-հայցական) + գոյական(տոական) + անորոշ դերբայ՝ բերանը քամուն բռնել, դարձանը քամուն տալ, բուրդը քամուն տալ կառույցներ: Տրական հոլովով դրվող գոյականները հիմնականում հանգման անուղղակի խնդրի դեր են կատարում:

Գոյական (տրական հոլով)+գոյական(ուղղական-հալածական)+անորոշ դերբայ կառույցում անորոշ դերբայը դարձվածքի հիմք է կազմում ուղղական-հայցականով դրվող գոյականի հետ, իսկ ծավալիչ անդամը գոյականի տրական հոլովն է (զլխին ծյուն գալ/իջնել, նստել, զլխին կարկուտ բերել, զլխին ծյուն բերել), գոյական (գործիական հոլովով)+գոյական(ուղղական-հալածական հոլովով)+անորոշ դերբայ՝ զլխով քամի անցնել կամ գոյական (ուղղական-հալածական)+գոյական(գործիական հոլովով)+անորոշ դերբայ՝ զլուխը քամիներով լցնել (գոյական բաղադրիչներից մեկը կարող է հոգնակի թվով գործածվել):

Քառանդան դարձվածային միավորումներում հանդիպում է (ածական+գոյական)+(գոյական+անորոշ դերբայ) կառույցը, որտեղ հիմքը գոյական+անորոշ դերբայ կապակցությունն է, իսկ ածական+գոյական բաղադրիչը ծավալիչն է՝ *հին դարձանը քամուն տալ*: Բազմանդան դարձվածային միավորները կազմվում են դարձվածքի հիմքի վրա՝ ծավալիչների հարադրումով:

Երկանդան գոյականական միավորներից հանդիպում է ածական+գոյական կառուցվածքային տիպը, որում գերադաս անդամը գոյական է, իսկ լրացում բաղադրիչը՝ ածական: Բառիմաստային առանձնահատկությունն այն է, որ դրանք դարձվածային սերտաճումներ են (*քարե կարկուտ, ոսկե անձրև, անձյուն ծնել*).

Գոյական + գոյական (ուղղական հոլովով) կառուցվածքային տիպի դարձվածքներում ուղղական հոլովով դրված լրացումները ածականական կիրառություն ունեն՝ *կայծակ հեռագիր*:

Գոյականական քառանդան կառույց է օրինակ՝ *փոթորիկ մի բաժակ ջրում* դարձվածային միավորը, որը կազմված է երեք գոյականներից և թվականից: Գերադաս անդամը նախադաս գոյականն է, որին լրացնում է *մի բաժակ ջրում* կապակցությունը:

Ածականական եռանդան դարձվածային կապակցություններում հանդիպում է երկու գոյականից և մեկ դերբայից (հարակատար) կազմված միավոր,

որտեղ հարակատար դերբայը գրեթե միշտ վերջադաս է, առաջին գոյականը ուղղական-հայցականով, երկրորդը՝ տրականով (խելքը քամուն տված): Որոշ կառույցներում հարակատար դերբայը հանդես է գալիս թե կապակցության մեջտեղում և թե վերջում՝ քամու բերած՝ քամու տարած (գուական + հարակատար դերբայ) + (գուական + հարակատար դերբայ):

Մակբայական կայծակի արագությամբ դարձվածային միավորում, որը կազմված է երկու գոյականներից, առաջին գոյական բաղադրիչն արտահայտված է սեռական, իսկ երկրորդը՝ գործիական հոլովով:

Դարձվածային բարդ ստորադասական նախադասության կառուցվածքով հանդես է գալիս՝ թքում ես երեսին՝ ասում է՝ ամծրս է գալիս դարձվածային միավորը, որտեղ գլխավոր նախադասության բայ գերադաս անդամը արտահայտվում է երրորդ դեմքով, իսկ ստորադասականինը՝ երկրորդ:

Դարձվածային տարբերակներից պետք է նշել այն դարձվածքները, որոնց գոյական բաղադրիչները եզակի/հոգնակի ձևավորում ունեն, օրինակ՝ գրպանում քամի/քամիներ խաղալ:

Ռուսերենում հանդիպում է ածական+գուական կառուցվածքով золотой дождь դարձվածային միավորը, որտեղ ածականը նախադաս է, իսկ գոյականը օգտագործված է եզակի ուղղականով: Ածականական погребный ветром դարձվածային միավորը նույնպես հարում է ածական+գուական կառուցվածքային տիպին:

Գուական+գուական (ներգուական հոլովով) կառուցվածքային ծավալում օրինակ է буря в стакане воды դարձվածքը:

Մակբայական как снег на голову դարձվածային միավորում բաղադրիչները ունեն կայուն շարահատություն և առաջին բաղադրիչը միշտ կապն է:

Հաղորդակցական ищи ветра в поле նախադասություն-դարձվածքն արտահայտում է իրականության հետ կապված իրավիճակային խոսք, ունի հիմնայական (հորդորական) նախադասությանը հատուկ կառուցվածք:

Բայական կառուցվածքի դերբայ+գուական+նախդիր+գուական տիպի կապակցություն է бросать слова на ветер դարձվածային միավորը, որի բառ բաղադրիչները, կարծես, իմաստաբանական կապ չունեն միմյանց հետ:

Անգլերենում ածականական համեմատական կապ + ածական + կապ + (հոդ) + գուական կառուցվածքով դարձվածային միավորները անվանում են հատկանիշը՝ *as white as snow, as quick as lightning, as thick as hail, (as) right as rain*: Առաջին կապը հաճախ բաց է թողնվում, վերացական գոյականների հետ չի կիրառվում հոդ: Ածականական *as black as thunder* - մռայլ համեմա-

տութիւնը նախադասութեան մեջ հանդէս է գալիս որպէս ետադաս որոշիչ՝ "You might give me a hand at least, Anne," she said..."instead of standing with a face as black as thunder"(D.Cusack) - «Գոնե օգնէիր ինձ, Աննա», ասաց նա ...«մոայլ դեմքով կանգնելու փոխարեն»(թարգմանութեան մեջ որոշիչը նախադաս է):

Վերախմաստավորված դարձվածային միավոր է *it rains cats and dogs* (դեռանում+բայ+գոյական) կառույցը, որտեղ գոյականները հոգնակի թվով են՝ միացած համադասական շաղկապով. բայը խոնարհված է, ունի «սաստիկ անձրևել» իմաստը: Բայական *sail before the wind* - 1.(ծով.) քամուն համընթաց նավարկել, 2.հաջողությամբ առաջ ընթանալ դարձվածային միավորն ունի բայ+նախդիր+հոդ+գոյական կառուցվածքը, *get wind of smth* - հասկանալ, հոտն առնել (բայ+գոյական+նախդիր+գոյական կամ դեռանում):

Գոյականական *a storm in a tea-cup* *ֆրանսերենից* պատճենված դարձվածային միավորը, որն ունի հոդ+գոյական+նախդիր+հոդ+գոյական կառուցվածքը կարծես իր հիմքում ունի անիրական վիճակ, *storm and stress* (անհանգստություն) կապակցությունը ներկայանում է գոյական +շաղկապ +գոյական կառուցվածքով:

Մակբայական դարձվածային միավորները բնորոշում են գործողութեան կատարման պայմանները՝ *rain or shine* - ցանկացած իրավիճակում: I have a job which brings in thirty dollars a week, rain or shine (I.Shaw) - Ես ունեմ մի աշխատանք, որ ցանկացած պարագայում շաբաթը երեսուն դոլար եկամուտ է բերում:

In the wind's eye (ծով.) - քամուն հակառակ (ուղղութեան մակբայ):

Անգլերենում հանդիպում են բազմանդամ համադասական և ստորադասական նախադասություն ասացվածքներ՝ *a straw shows which way the wind blows, it never rains but it pours*, հականշային զուգադրումներ՝ *small rain lays great dust*, հարցական նախադասություններ՝ *what (good) wind brings you here?*-Ո՞ր քամին բերեց:

Հայերենում, ռուսերենում և անգլերենում բնութեան երևույթ բաղադրիչով դարձվածքների զուգադրական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդհանրություններ և տարբերություններ են նկատվում դարձվածքների իմաստակառուցվածքային տիպերում՝ կախված նշված լեզուների կառուցվածքային, քերականական և իմաստային առանձնահատկություններից և լեզուները կրող ժողովուրդների լեզվածոտնությունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա.Մ. Սուքիասյան, Ս.Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975

2. А.И.Молотков, Фразеологический словарь русского языка, Москва, 1978
3. A.V.Kunin, Comprehensive English-Russian Phraseological Dictionary, Moscow, 2006
4. Պ.Ս.Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ, բացատրական բառարան, Երևան, 2011
5. Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, մաս 1-2, Երևան, 1976
6. Ա.Ս. Ղարիբջան, Ռուս-հայերեն բառարան, Երևան, Հայաստան հրատ., 1968
7. Ռ.Լ.Սեյրումյան, Պ.Ս. Պողոսյան, Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1975
8. Պ.Ս.Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973
9. Ա.Ս. Սարգսյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1980
10. Ե.Հ. Գևորգյան, Հայերենի դարձվածքները, Երևան, 1969
11. Խ.Գ. Բաղդկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, 1986
12. Պ.Ս.Բեդիրյան, Ակնարկներ ժամանակակից հայերենի դարձվածաբանության, Երևան, 2007
13. Ա.Ս. Սուբխաջյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1999
14. Н.М.Шанский, Фразеология современного русского языка, Москва, 1985
15. А.В.Кунин. Курс фразеологии современного английского языка, Москва, 1986

Phraseological units with the components of natural phenomena (element, precipitation) in Armenian, Russian and English

In the basis of the research are the semantic and structural characteristics of word relation in phraseological units including names of natural phenomena "wind", "storm", "lightning", "hail", "rain", "snow". Comparative analysis of these phrases in Armenian, Russian, English reveals some resemblances and differences between semantic structural and grammatical peculiarities of the phraseological units of the mentioned languages.

The revealed resemblances and differences witness about the similarity and variety of language thinking of native speakers.